Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍՆ «Մարտունո Տ. Աբրահամյանի անվան

ավագ դպրոց» ՊՈԱԿ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների
վերապատրաստում

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում»

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ՝ «Մարտունու Տ .Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Բեյբության

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Մարինե Մանուկյան

ԴՊՐՈՑ՝ Ա. Օհանյանի անվան համար 2-րդ հիմնական ՊՈԱԿ

2022թ. Մարտունի

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 5

1.1 Արժեհամակարգի ձևավորումը գրականության դասավանդման ժամանակ 5

1.2 Հարցադրումները, որպես արժեհամակարգի ձևավորման մեթոդ…….……8

Գլուխ 2. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ 14

2.1 Խմբի նկարագիր 14

2.2 Փորձարարական դաս 1 14

2.3 Փորձարարական դաս 2.....15

Եզրակացություն 17

Օգտագործված գրականության ցանկ ……..19

Դասապլան 1 ……...……...20

Դասապլան 2……...…...……..…..22

Դասերի անդրադարձ……....24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի և հատկապես դպրոցականների մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Դպրոցականները այդ գործընթացների մասնակիցներն են, այդ արժեքների ժառանգորդները ու կրողները: Ժամանակի պահանջներից ելնելով՝ նրանց առջև ծառանում է այդ ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը, ինչին էլ ձգտում են բոլորը:

Կրթությունը մարդակենտրոն գործընթաց է, ազգի հիմքը կրթությունն է և ցանկացած լավ, բարի ու արժեքավոր բան, հենց կրթության միջոցով է, որ փոխանցվում է մարդկանց, տարածվում հասարակության մեջ, դաստիարակում մատաղ սերնդին: Եվ այդ ամենը կատարվում է հենց կրթության միջոցով ու կրթության ֆոնի վրա: Կրթության ողնաշարը, կրթության առանցքը արժեհամակարգն է: Այն հիմքերի հիմքն է: Կարծում ենք, որ ցանկացած մարդու համար արժեքային համակարգն այն է, ինչ այդ մարդն ինքն իր համար արժեք է համարում:

Դասապրոցեսի անցկացման ընթացքում ուսուցիչը պետք է հաշվի առնի տվյալ թեմայի արժեհամակարգի կարևորությունը, տվյալ թեման ուսումնասիրի տարբեր արժեհամակարգային տեսանկյուններից, համեմատի այդ ժամանակաշրջանի մոտեցումները և պատկերացումները ներկայի հետ, ստեղծի անկաշկանդ միջավայր, որպեսզի աշակերտներից յուրաքանչյուրը ազատ և համարձակ արտահայտի իր կարծիքը այս կամ այն թեմայի վերաբերյալ:

Աշխատանքի *արդիականությունը* կապում ենք նրա կարևորության հետ: Բոլոր ժամանակներում էլ եղել են արժեքներ, որոնք մարդկության կյանքի անբաժան մասն են կազմել: Դրանք, ժամանակի պահանջներից ելնելով, պարբերաբար ենթարկվել են որոշակի փոփոխությունների, բայց միևնույնն է, կան արժեքներ, որոնք նույնն են բոլոր ժամանակներում. ժողովրդավարություն, արդարադատություն, հավասարություն, իրավունք, հայրենասիրություն, սեր և այլն:

Աշխատանքի *նպատակն* է ուսումնասիրել արժեհամակարգային դրսևորումները գրականության դասի շրջանակներում, ինչպես նաև կողմնորոշել աշակերտներին ցանկացած իրավիճակում, լինել շրջահայաց, մոտիվացված և տեղեկացված, հաշվի նստել դիմացինի կարծիքի հետ, ունենալ սեփական տեսակետը:

Հետազոտության *խնդիրներն* են՝

- բացահայտել երեխայի հետաքրքրասիրությունը, պատկերացումները հայրենիքի, նախնիների և աշխարհի մասին ընդանրապես,

- ծանոթանալ հերոսության, դավաճանության օրինակներին,
- ձևավորել սեփական դիրքորոշումը, կարծիքը,
- վեր հանել ստեղծագործությունում հանդիպող արժեքները և քննարկել դրանց արդիականությունն այսօրվա աշխարհում:

Ուսումնասիրության *օբյեկտն* արժեհամակարգն է, դրա դրսևորման ձևերը գրականության դասին:

Աշխատանքն ունի *տեսական* և *կիրառական* նշանակություն: Տեսականի միջոցով կազմակերպվում, բացահայտվում են գործնական հմտությունների ուսուցումը, զարգացումը:

Աշխատանքը կատարելիս ուսումնասիրել եմ թեմային առնչվող գիտամեթոդական համապատասխան գրականություն. վերլուծել եմ, համեմատել, այդ գիտելիքները, կիրառել եմ դասավանդման ընթացքում:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, դասի պլաններից, անդրադարձից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքի ընդհանուր ծավալը 24 համակարգչային էջ է:

ԳԼՈՒԽ 1. ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1.1. Արժեհամակարգի ձևավորումը գրականության դասավանդման ժամանակ:

Երեխաների կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք «արժեքներ»[1] հասկացությունը: Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ և միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում:

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումն աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացների մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Նրա առջև ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը: Ներկայումս կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ: Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և

[1] Փախչանյան Ա., Դպրոցը, արժեքները և տարատեսակ «ազատությունները», https://mediamax.am/am/column/12925/?fbclid=IwAR10OcljJv8mPK_qUqvnAt1sbYFJTLvuIVSJfnQHsFOa1Rmghs8Z9FUGUWs:

մեթոդների վերանայում, կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունն է, որը լավագույն կերպով մատուցվում է հայոց լեզվի և գրականության դասընթացների ժամանակ՝ կարևորելով գրական մեր մեծ ժառանգությունները:

Նոր սերնդի արժեհամակարգի[2] ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի բնավ հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիրակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները[3], որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիրակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն)[4] առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիրակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: «Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը,

---

[2] Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Երևան, 2002, էջ 65:

[3] Բաբանսկի Յու. Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում, էջ 112:

[4] Փարեմուզյան Ին., Սովորողների արժեհամկարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում, էջ 400:

մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ»:

Այստեղից կարող ենք եզրահանգել, որ կրթության խնդիրն է մարդու զարգացման ընդհանուր և անհատական պահանջների բավարարումը՝ նրա կյանքը ավելի հարմարավետ և բարեկեցիկ դարձնելու համար: Այս խնդիրը լուծելու համար է, որ կրթության բովանդակությունը, առարկայական գիտելիքների ուսուցումից բացի, ներառում է սովորողի ճանաչողական, ստեղծագործական, տրամաբանական, հաղորդակցական, ինքնակազմակերպման, ինքնահաստատման, ինքնագնահատման կարողությունների ձևավորումը, որոնք հիմք են դառնում անհատի մտածելակերպի, գործելակերպի և վերաբերմունքի զարգացման համար: Այս որակները կազմում են կրթության բովանդակության արժեքային բաղադրիչը, որի գերխնդիրը իր պարտականություններն ու իրավունքները գիտակցող քաղաքացիների ձևավորումն է:

Պետական կրթական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի «գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության ու մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է»[5]: Միջնակարգ ուսումնական հաստատության և ավագ դպրոցի բարձր դասարանների աշակերտների ներդաշնակ և ամբողջական զարգացման գործում կարևոր դեր են խաղում արժեբանական այնպիսի որակները, ինչպիսիք են պատասխանատվությունը, ընկերասիրությունը, աշխատասիրությունը, նպատակասլացությունը, հանդուրժողականությունը և այլն:

Արժեքը որևէ բանի կարևորությունը, նշանակալիությունը և օգտակարությունն է: Արժեհամակարգը մարդու առարկայական և սոցիալական գործունեության մեջ կատարում է ամենօրյա կողմնորոշման դեր: Մաքս Վեբերն արժեքի կարևոր հատկանիշ էր համարում պատմականությունը՝ ենթադրելով, որ այն միայն ժամանակաշրջանի ընդհանուր դիրքորոշումների արտահայտումն է: Նիկոլայ Ռոզովի կողմից կրթության ոլորտի համար մանրամասնորեն դասակարգվել են նշանակալի արժեքներ, որոնցից են՝ «ա. մարդասիրական արժեքները, որոնք վերաբերում են մարդու իրավունքներին և արժանապատվությանը, բ. սոցիալական արժեքները, որոնք վերաբերում են առանձին մարդկանց և խմբերի փոխադարձ գործունեությանը քաղաքական, տնտեսական և իրավական ոլորտում, գ. մշակութային արժեքները, որոնք վերաբերում են արվեստին, կրոնին, բարոյականությանը, ազգային և էթնիկ ավանդույթներին, դ. էկոլոգիական արժեքներ, որոնք վերաբերում են շրջապատող բնությանը, շրջակա միջավայրին, կենսական բազմազանությանը»[6]:

---

[5] Թորոսյան Ար., Բարձր դասարանցիների արժեքային որակների զարգացումը որպես «Հայոց պատմություն» առարկայի ուսուցման նպատակ, «Մխիթար Գոշ», Գիտամեթոդական հոդվածներ, էջ 264:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 265:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Մայրենիի և գրականության ուսուցման գործընթացում, ընդհանրապես դպրոցական պրակտիկայում հանդիպում ենք տարբեր տիպի դասերի, որոնք ունեն իրենց տարբեր հիմքերը, ուսումնադաստիրակչական նպատակը: Դասերի տիպերի դասակարգման շատ տարբերակներ ունեն ընդհանուր բնույթ: Դրանց հիմքում ընկած են հիմնական նպատակները, պատրաստի գիտելիքների յուրացումը, կրկնության միջոցով դրանց ամրապնդումը, գիտելիքների կիրառումը պրակտիկայում, կարողությունների և հմտությունների ձևավորման նպատակով կատարվող վարժությունները, ընթացիկ կամ ընդհանրացնող կրկնությունները, սովորողների ձեռք բերած գիտելիքների հմտությունների ու կարողությունների ստուգումը և այլն: Դիդակտիկական և մեթոդական գրականության մեջ կան տարբեր տիպի դասերի նկարագրություններ և դրանց կառուցվածքի սահմանումներ: Այդ տիպի դասերից են ներածական դասը, խառը կամ համակցված դասը, նոր գիտելիքների ուսումնասիրման դասը, զրույց-դասը, գիտելիքների ստուգման և գնահատման դասը, կրկնության-հանրագումարային դասերը, կինո-դասերը, էքսկուրսիոն դասը, սովորողների ռեֆերատների պաշտպանության դասը, սեմինարների դասը, ստուգարքի դասը:

Թվարկվածներից առավել գործածականը և արդյունավետը, կարծում ենք, խառը /համակցված/ դասն է: Դասի այս տիպն այսպես է կոչվում այն պատճառով, որն ընդգրկում է ուսուցման գործընթացի շատ կողմեր՝ նոր գիտելիքների հաղորդում և յուրացում, ամրապնդում, ընդհանրացում, ստուգում և գնահատում: Դասի այս տիպը ամենատարածվածն է, մանավանդ ցածր դասարաններում, որտեղ սովորողների ուշադրությունն անկայուն է, նրանք չեն կարողանում երկար ժամանակ զբաղվել միևնույն բնույթի աշխատանքով, կարիք են զգում աշխատանքի բովանդակության, ուսուցման ձևերի ու մեթոդների հաճախակի փոփոխման, այլապես կկորցնեն հետաքրքրությունը դասի նկատմամբ: Դասի այս տիպը կիրառվում է ոչ մեծ ուսումնական թեմաներ ուսումնասիրելիս:

1.2. Հարցադրումները, որպես արժեհամակարգի ձևավորման մեթոդ

Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը և արդիականացումը կրթության որակի բարելավման հիմքն են: Հարցերի կիրառությունը դասավանդման գործընթացում ամենահզոր գործիքներից մեկն է, և դրանց ճիշտ կիրառությունը զգալիորեն կարող է բարձրացնել ուսուցման որակը և ավելացնել սովորողների ներգրավվածության մակարդակը: Դասապրոցեսում կարևոր է բացահայտումների փուլը, որտեղ հիմնական դերում աշակերտն է և ոչ ուսուցիչը: Այս թեմային է անդրադառնում նաև Քրիստին Չինը իր աշխատություններից մեկում՝ նշելով, որ իրական ուսուցում ապահովելու համար

պետք է օգտագործել մարդու միտքը և ոչ թե հիշողությունը: Հարցեր տալը և հարցերին պատասխանելու կարողությունն ուսումնառության մեջ առանցքային տեղ են գրավում: Ուսումնասիրությունը բացահայտել է, որ վերջին 15 տարիների ընթացքում ուսուցիչները մեծամասամբ տվել են սխալ հարցեր՝ կենտրոնանալով ոչ թե ուսումնառությունն առաջ մղող, այլ սովորողի տիրապետած որոշակի տեղեկույթը վերհանող հարցադրումների վրա:

Հետազոտական աշխատության նպատակն է ներկայացնել հարցադրումների այն ռազմավարությունները, որոնք կիրառվում են սովորողների գիտելիքները գնահատելու, ուսուցանվող նյութն ավելի խորն ըմբռնելու, քննադատական մտածողություն զարգացնելու, աշակերտների ներգրավվածության աստիճանը բարձրացնելու մոտիվացիան խթանելու համար: Ավելին, դասի նպատակներից բխող հարցերի առաջադրումը կարող է հիմք հանդիսանալ նոր գաղափարների առաջացման, ավելի խորքային ուսումնասիրությունների համար: Ուսուցման արդյունավետության և սովորողների ներգրավածության բարձրացման համար քննարկվել են հարցադրման մի քանի ռազմավարություններ: Գրականության մեջ հարցադրումների մեթոդի կիրառումը դասավանդման գործընթացի կարևոր և բաղկացուցիչ մասն է կազմում: Հարցադրումների կիրառմամբ ոչ միայն կարելի է ստուգել նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը, խթանել վերլուծական մտածելակերպը, զարգացնել և ամրապնդել ձեռք բերվածը, այլ նաև բարձրացնել աշակերտների ներգրավվածության աստիճանը, որն էլ իր հերթին ազդում է ուսուցման որակի և արդյունավետության վրա: Բացի այդ, կան հարցեր, որոնք տրվում են հոգեբանորեն ապահով միջավայրում, խրախուսում են ստեղծագործական և քննադատական մտածելակերպի զարգացումը, ինչպես նաև բարձրացնում են աշակերտների ինքնավստահությունը: Հետազոտական աշխատանքի նպատակն է ներկայացնել հարցադրումների մի քանի ռազմավարություններ[7], որոնք կարող են նպաստել դասապրոցեսին աշակերտների ներգրավվածության մեծացմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

1.Ամբողջ դասարանին ուղղվող ընդհանուր հարցերի ռազմավարություն[8]: Սա այն մոտեցումն է, երբ ուսուցիչը հարցն ուղղում է ամբողջ դասարանին: Ամենայն հավանականությամբ, սա ամենատարածված մեթոդներից մեկն է, որի շրջանակում տրվող հարցերը հիմնականում նպատակ ունեն պարզելու նյութի յուրացման մակարդակը կամ պարզել, թե որքանով են աշակերտներն ընկալել ուսուցանվող նյութը: Դասավանդման փորձը ցույց է տալիս, որ այս հարցերին պատասխանում են հիմնականում դասարանի բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները, մյուսները պարզապես լինում են լսողի դերում: Ավելին, հաստատվեց նաև Գալլի այն տեսակետը, որ որքան ավելի շատ հարցադրումներ են հնչում, այնքան ավելի պակաս աշակերտներ են մասնակցում դասին:

Ճիշտ հարցադրման դեպքում այն կարող է հիմնովին փոխել նախնական պատկերը:

---

[7] Սահակյան Թ. Հարցն ու հարցադրումը որպես դասի կարևոր և ուղղարդիչ բաղադրիչներ, «Մխիթար Գոշ», ուսումնամեթոդական հոդվածներ, 2015:

[8] Ղուկասյան Աս., Հարցադրման մեթոդները և ուսուցման արդյունավետության բարձրացումը, էջ 180, https://www.vsu.am/grqer/2018/bprak/xukasyanasya.pdf:

Հարցերի ճիշտ ընտրությունը և դրանց ճիշտ ձևակերպումն էականորեն կարող են փոխել վերջնական արդյունքը: Եթե հարցադրման սկզբում դասին ներգրավված էին ընդամենը 3–5 աշակերտ, ապա հարցերի ձևափոխման արդյունքում դասին ակտիվորեն մասնակցում էր գրեթե ողջ դասարանը:

2. Հարցական բառերի ռազմավարություն[9]

Այս մեթոդը կիրառվում է, երբ աշակերտներն արդեն ծանոթ են թեմային: Առաջարկվում է աղյուսակ կազմել, որի ձախ կողմում պետք է գրել հարցական բառերի մի ամբողջ շարք, իսկ աջ կողմում՝ թեմային առնչվող հասկացություններ: Այնուհետև օգտագործելով երկու աղյուսակների գրառումները՝ կազմել հնարավորինս շատ հարցեր, քննարկել առաջարկված հարցերից 3-4 հարց, որոնք առավել հետաքրքիր են աշակերտների համար:

Օրինակ՝ Հովհաննես Թումանյան «Թմբկաբերդի առումը» (աղյուսակ 1.)

Հարցական բառեր	Հիմնական տերմինները
Ինչպե՞ս, Ի՞նչ, Որտե՞ղ, Ինչու՞	Թմկա բերդ, Արաբական ցեղեր, աշուղի գովք, կին ու գինին, Ջավախք
Ով՞, Ովքե՞ր	Թաթուլ, Թմկա տիրուհի, թափառական աշուղ,Նադիր շահ, զորք
Ե՞րբ, Որքա՞ն, Քանի՞	40 օր ու գիշեր,
Ու՞մ միջև	Իրան, Թուրան, Թաթուլի և շահի միջև,

Օգտագործելով աղյուսակի ձախ սյունի հարցական բառերը և աջ սյունի հասկացությունները՝ սովորողները կազմեցին ավելի քան 15 հարց: Հարցերի կազմման գործընթացին մասնակցեցին բոլոր աշակերտները: Դասի երրորդ հատվածում պարզաբանվեցին ընտրված 3 կարևորագույն հարցերը ուսուցչի ուղղորդող հարցերի օգնությամբ:

3.Պատասխանում են անվանակոչվածները [10]

Այս ռազմավարության շրջանակում անվանակոչվում է աշակերտի հստակ անուն, որ պատասխանում է հարցին այն հնչեցնելուց հետո: Սա այն եզակի ռազմավարություններից է, որի կիրառությունն ապահովում է գրեթե բոլոր աշակերտների ներգրավվածությունը: Այս մեթոդի առավելությունը կայանում է նրանում, որ դասին մասնակցում են գրեթե բոլոր աշակերտները՝ անկախ իրենց առաջադիմությունից: Յուրաքանչյուրը մասնակցում է իր չափով, և այս պարագայում խրախուսվում է ցանկացած հաջողություն, անգամ ամենափոքրը: Ավելին, եթե աշակերտի կողմից տրված պատասխանը այն չէ, ինչ ակնկալվում է, ապա ոչ թե պետք է հարցն ուղղել այլ աշակետի, այլ պատասխանող աշակերտին օգնել վերաձևակերպել պատասխանը: Դասերի ընթացքում անհրաժեշտ է կիրառել մոտեցումներ, որոնք օգնում են «ջերմացնել» այսպես կոչված «սառը անվանակոչման» ռազմավարությունը: Ստորև ներկայացնենք դրանցից հիմնականները.

---

[9] Ղուկասյան Աս., Հարցադրման մեթոդները և ուսուցման արդյունավետության բարձրացումը, էջ 181, https://www.vsu.am/grqer/2018/bprak/xukasyanasya.pdf:

[10] Տե՛ս նույն տեղում:

- Նախապես զգուշացրե՛ք աշակերտներին, որ մեծապես խրախուսվում է դասին մասնակցությունը: Յուրաքանչյուր աշակերտին տվե՛ք ձևավորող գնահատական:
- Աշակերտներին տալ ժամանակ, որ նրանք պատրաստեն իրենց հարցերը, ինչպես նաև անդրադարձ կատարեն հետաքրքրող հարցերին:
- Պետք է կարողանալ հմտորեն կառավարել ողջ պրոցեսը և աջակցել աշակերտներին, որ նրանցից յուրաքանչուրն իր հնարավորության չափով ներգրավվի դասին:
- Օգտագործե՛ք բաց հարցեր և օգնե՛ք աշակերտին հանգել ճիշտ պատասխանի:
- Չափազանց կարևոր է հոգեբանական ապահով միջավայրի ստեղծումը:

4.Վեց W-երի ռազմավարություն[11]

Ժամանակակից մանկավարժության մեջ մեծ տարածում է գտել այսպես կոչված «Վեց W-երի» ռազմավարությունը: Գերմաներենում հիմնական 6 հարցերը՝ ո՞վ, ի՞նչ, ինչո՞ւ, ե՞րբ, որտե՞ղ, ինչպե՞ս, սկսվում են նույն՝ W տառով: Թեմայի ավարտից հետո սովորողները զույգերով երկխոսություն են վարում՝ փորձելով պարզել, թե ինչ է տվել իրենց տվյալ թեմայի ուսումնասիրությունը: Ասենք՝ «Ինչո՞ւ սովորեցիր այս թեման», «Ի՞նչ տվեց այն քեզ», «Որտե՞ղ, ե՞րբ, ինչպե՞ս կարող ես կիրառել ստացած գիտելիքները» և այլն: Քննարկվել է խնդիր, որի լուծման արդյունքում սովորողները ստացած գիտելիքները կիրառել են անծանոթ իրադրությունում:

5. Պատասխանին սպասելու ժամանակ[12]

Բարձր մտածական գործընթացների զարգացման համար էական կարևորություն ունի սպասելու ժամանակը, քանի որ այն ազդում է պատասխանների որակի և քանակի, ինչպես նաև հետագա երկխոսության առաջացման վրա: Սպասելու ժամանակը հարցի և աշակերտի պատասխանի միջև ընկած ժամանակահատվածն է կամ ուսուցչի առաջին և երկրորդ հարցերի միջև ընկած ժամանակահատվածը: Եթե հարցը լսելուց հետո աշակերտները չեն արձագանքում համեմատաբար կարճ ժամանակահատվածում, ուսուցիչը հաճախ պետք է փորձի առաջ տանել զրույցը՝ կրկնելով, վերաձևակերպելով հարցը կամ դիմելով աշակերտներին: Ավելի բարդ հարցերի դեպքում, որոնք պահանջում են բարդ կոգնիտիվ վերլուծություններ, հնարավոր է անհրաժեշտ լինի տրամադրել աշակերտներին 1-2 րոպե, նախքան պատասխանելը: Սխալ է, երբ ուսուցիչը պատասխանում է իր իսկ հարցերին, և այդպիսի վարքագիծը արագորեն դառնում է ինքնախաբեության ձև: Արդյունքում աշակերտները զրկվում են հարցը «բռնելու» և իրենց սեփական պատասխանները ձևակերպելու հնարավորությունից, ինչը կարևոր գործընթաց է աշակերտների ներգրավածությունը բարձրացնելու համար: Անընդհատ պատասխանելով հարցերին աշակերտների փոխարեն, ուսուցիչը անուղղակիորեն «ասում է», որ նորմալ է, որ նրանք չեն պատասխանում հարցերին, քանի որ ուսուցիչը ի վերջո ինքը կպատասխանի: Արդյունքում աշակերտների սովորելու և դասին մասնակցելու

[11] Ղուկասյան Աս., Հարցադրման մեթոդները և ուսուցման արդյունավետության բարձրացումը, էջ 182, https://www.vsu.am/grqer/2018/bprak/xukasyanasya.pdf:
[12] Տե՛ս նույն տեղում, էջ 183:

գործընթացը մասնակիորեն դադարեցվում է: Իրականացված հետազոտությունների շրջանակում պարզվել է, որ պատասխանին ավելի երկար սպասելով՝ գրանցում են հետևյալ հաջողությունները.

- Սովորողների պատասխաններն ընդարձակվում են:
- Ամբողջական նախադասություններ և վստահության ավելացում:
- Հայեցողական մտածողության դրսևորում:
- Ավելանում են սովորողի հարցերը և աշակերտների ակտիվությունը:
- Ուսուցիչները վերանայում են սովորողներից ունեցած ակնկալիքները:
- Անցում ուսուցչակենտրոն ուսուցումից սովորող-սովորող վարքի դրսևորումներին և ընդլայնում են հարցերի շրջանակը:

Այսպիսով՝ ուսուցչի սպասման ժամանակի ավելացումն ստեղծում է այնպիսի մթնոլորտ, որը նպաստավոր է մտածողության բարձր մակարդակներով արդյունավետ հարցերի համար: Սովորողները ևս օգտագործում են սպասման ժամանակն ավելի ամբողջական պատասխաններ ձևակերպելու համար:

6.Հարցերի շղթայի մեթոդ[13]

Լինում են դեպքեր, երբ բարդ հարցերը տեղին չեն՝ առանց նախապես ամրապնդելու գիտելիքային հիմքը: Օրինակ՝ ներածական դասընթացում ավելի պարզ հարցեր են պահանջվում: Ինտեգրատիվ դասընթացների ընթացքում ուսուցիչը արագորեն պետք է անցնի ավելի բարդ հարցերի, ավելի պարզ հարցեր տալուց հետո՝ ուղղված նախնական գիտելիքների պաշար ձևավորելու համար: Հարցերի ցանկը պետք է տարբերվի՝ կախված դասընթացի բովանդակությունից և նպատակներից:

Հարցերի շղթայի մեթոդը աշակերտներին մակերեսային պատասխաններից տանում է դեպի խորը քննարկումներ: Ավելին, աշակերտների կողմից հարցերին տրված պատասխանները, անկախ այն բանից, թե դրանք որ մակարդակի հարցեր են, վկայում են այն մասին, որ աշակերտները հստակ ըմբռնել են հարցը և գիտեն, թե խոսքը կոնկրետ ինչի մասին է: Այսպիսով, չափից շատ հարցերի օգտագործումը կարող է հանգեցնել բացասական արդյունքների և աշակերտների պասիվության: Դա կարող է հանգեցնել աշակերտներին չմասնակցելու քննարկումներին, այն կարող է առաջացնել վախի և հարցաքննության զգացողություն:

Այսպիսով, բարձր մտածական գործընթացների զարգացման համար էական կարևորություն ունեցող տեխնիկաներից մեկը սպասելու ժամանակն է, քանի որ այն ազդում է պատասխանների որակի և քանակի, և հետագա երկխոսության առաջացման վրա: Սխալ է, երբ ուսուցիչը պատասխանում է իր իսկ հարցերին, և այդպիսի վարքագիծը արագորեն դառնում է ինքնախաբեության ձև: Արդյունքում աշակերտները զրկվում են հարցը «բռնելու» և իրենց սեփական պատասխանները ձևակերպելու հնարավորությունից, ինչը կարևոր գործընթաց է աշակերտների ներգրավվածությունը բարձրացնելու համար: Եվ այսպես հարցադրումների մեթոդը ուսուցման հզոր ռազմավարություն է: Հարցեր տալու և հարցերին պատասխանելու կարողությունները ուսումնառության մեջ առանցքային դեր ունեն: Ճիշտ և ժամանակին կատարված հարցադրումները շարժում են սովորողի

[13] Ղուկասյան Աս., Հարցադրման մեթոդները և ուսուցման արդյունավետության բարձրացումը, էջ 184, https://www.vsu.am/grqer/2018/bprak/xukasyanasya.pdf:

հետաքրքրությունը, խթանում քննադատական մտածողությունը, մղում վերլուծական անդրադարձի, օգնում սովորողներին յուրովի իմաստավորել ուսումնասիրվող գաղափարները, համադրել սովորածը և կատարել ընդհանրացումներ:

Ուսունական գործընթացի կազմակերպման առումով շատ կարևոր է նաև հարցեր տալու հմտությունը: Կարևոր է ոչ միայն հարցերը ճշգրիտ ներկայացնել այլև, դրանց տրամաբանական հերթականությունն ապահովելը, որի բացակայությունը կարող է աշակերտներին շեղել մատուցվող նյութից կամ դասի նպատակից: Հարցերը պետք է լինեն՝[14]

1. Հստակ
2. Նպատակաուղղված
3. Հակիրճ
4. Տեղին
5. Աշակերտների մակարդակի համապատասխան
6. Տրամաբանական հաջորդականությամբ
7. Մտածելու տեղիք տվող

Մանկավարժական գրականության մեջ հարցերը դասակարգվում են հետևյալ կերպ՝

- Բաց՝ սովորաբար սկսվում են «Ի՞նչ», «Ինչպե՞ս» հարցերով: Այդպիսի հարցերը չեն ենթադրում միանշանակ պատասխան:
- Փակ՝ արտահայտվում է մեկ բառով պարզապես «այո» կամ « ոչ»:
- Ենթատեքստով՝ «Դուք համաձայն եք, որ Y-ը ավելի հետաքրքիր է քան՝ X-ը կամ դուք հավանաբար կսխալվեք, եթե ընտրեք Z տարբերակը» և այլն:
- Հետադարձ՝ ճշգրտվում է նյութի ընկալումը, աշակերտների զրույցի մեջ ընդգրկված լինելը նրանց պատասխանները զարգացնելու, կամ հետագա քնարկումը խրախուսելու և շարունակելու նպատակով:
- Հուշող՝ «Չե՞ք կարծում արդյոք, որ ...», «Մի՞թե դուք կարծում եք ,որ ...»:
- Ուղղորդող՝ «ի՞նչ նոր հասկացությունների հանդիպեցինք այս թեման ուսումնասիրելիս»:

[14] Պետրոսյան Մ., Հարցերի կամ հարցադրումների մեթոդ, «ԿԶՆԱԿ» հիմնադրամ https://kznakhimnadram.blogspot.com/p/blog-page_16.html:

ԳԼՈՒԽ 2. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

2.1 Խմբի նկարագիր

Դասարանում կա 25 աշակերտ՝ 14 տղա և 11 աղջիկ:

2.2 Փորձարարական դաս 1

Ուսուցիչն անցկացնում է ներկա-բացակա դասարանում (1-3 րոպե): Այնուհետ 5 րոպե տրամադրվում է տնային աշխատանքների ստուգմանը, դժվարություն առաջացրած հարցերի քննարկմանը:

20-25 րոպեների ընթացքում դասարանը անցնում է նոր դասին՝ աշակերտները բաժանվում են խմբերի, ուսուցիչը յուրաքանչուր խմբին հանձնարարում է պոեմից մի հատած և բացատրում հանձնարարությունը: Աշակերտները կարդում են իրենց հատվածը և պատրաստվում ներկայացնել այն դասարանին: Խմբից ընտրվում է մեկ աշակերտ, ով ներկայացնում է խմբին հանձնարարված հատվածը: Աշակերտները ներկայացնում են իրենց հանձնարարված հատվածի բովանդակային գաղափարը և փոխանակվում մտքերով: Մինչ խմբերը կպատրաստվեն, ուսուցիը կարճ ակնարկ է անում տվյալ թեմայի վերաբերյալ:

Երբ ավարտվեց խմբերի հանձնարարությունների կատարման ժամանակը, ուսուցիչը «Վեց W-երի ռազմավարության» միջոցով գրատախտակին գրեց այն հիմնական անունները, տեղանունները, տարեթվերը և բառերը, որոնք աշակերտները նշեցին: Այս մեթոդը ակտիվություն առաջացրեց դասարանում:

Քննարկումների ընթացքում, աշակերտները ուսուցչի օգնությամբ և ուսուցչի տված հարցերի միջոցով, խմբով կամ անվանական պատասխանեցին թեմային վերաբերող հարցերին և եկան այն եզրահանգման, որ Թումանյանը ձգտել է պոեմին որքան հնարավոր է պատմական իրադարձության բնույթ հաղորդել և փիլիսոփայական ընդհանրացումներ կատարել: Այստեղ Թումանյանը վառ է պահել մարդու կոչման, լավ ու բարի գործ կատարելու գաղափարը և դրան հակադրել չար և վատը: Աշակերտներից մեկը նշեց, որ պոեմում առծածված են բանաստեղծի խոհերը մարդու, կյանքի ու գործի մասին, իսկ նախերգանքում, գովբանվում է լավ գործի հավերժության գաղափարը.

Անց են կենում սեր ու խընդում
Գեղեցկություն, գանձ ու գահ,
Մահը մերն է, մենք՝ մահինը,
Մարդու գործն է միշտ անմահ:[15]

Այս ընթաքում մասնագետը հիմնականում օգտագործել է հարցադրումների հետևյալ մեթոդները՝ «Պատասխանում են անվանակոչվածները», «Ամբողջ դասարանին ուղղվող ընդհանուր հարցերի ռազմավարություն» և «Պատասխանին սպասելու ժամանակ»: Հարցադրումների այս տեսակները հնարավորություն են տալիս ուսուցչին ապահովել դասարանի ակտիվ ներգրավածությունը ամբողջ դասապրոցեսին:

[15] Գասպարյան Դ., Գրականություն 8, Երևան 2012, էջ 142:

Աշակերտները ուսուցչի այն հարցին թե որ թեման է ամենակարևորը այս պոեմում, աշակերտներից ոմանք պատասխանեցին, որ հայրենասիրության գաղափարը և ազնիվ գործն է: Այդ հիմքի վրա է ստեղծվել իշխան Թաթուլի կերպարը:

5-10 րոպեում գնահատվում են սկզբից մինչև դասի ավարտն ակտիվ մասնակցած աշակերտները, իսկ համեմատաբար պասիվ աշակերտները ստանում են լրացուցիչ հարցեր:

5 րոպեում ուսուցիչը հանձնարարում է անգիր սովորել Նախերգանքը և տալիս է տնային առաջադրանքներ:

2.3 Փորձարարական դաս 2

Ուսուցիչն անցկացնում է ներկա-բացակա դասարանում (1-3 րոպե): Այնուհետ 5 րոպե տրամադրվում է տնային աշխատանքների ստուգմանը, դժվարություն առաջացրած հարցերի քննարկմանը:

20-25 րոպեների ընթացքում դասարանը բաժանվում է երկու խմբի՝ տղաների և աղջիկների: Երկրորդ դասի հիմնական թեման կերպարների վերլուծությունն էր: Հանջնարարվեց ընթերցել պոեմից այն հատվածները, որտեղ Թումանյանը նկարագրում է գլխավոր հերոսներին.

Ծով են աչքերը Ջավախքի դրստեր,
Ու կորչում է մարդ նրրա հայացքում,
Ճակատը ճերմակ էն ձյունից էլ դեռ,
Որ բարձր Աբուլի գագաթն է ծածկում:[16]
***
— Էն Թրմկա ձորում Թաթուլն է կրռվում,
Էն թուրն է շաչում էնպես ահարկու:
Ի՜նչ սարի արծիվ կրհասնի քաջին,
Ի՜նչ Շահ կրկանգնի նրրա առաջին:[17]

Ուսուցիչը նկատեց, որ աշակերտներն այդ տարիքում արդեն ունեն սեփական կարծիք և կարողանում են մարդկանց վերլուծել իրենց քայլերի ելներով: Եվ պատահական չէ, որ կերպարի վերլուծության ընթացքում խմբերը Թաթուլին ներկայացրեցին իբր ազնիվ, խիզախ և հայրենասեր տղամարդ:
Գնալով հայրենասիրություն թեման կարծես դառնում էր այս դասի հիմանական գաղափարը: «Պատասխանում են անվանակոչվածները» մեթոդը օգտագործելու ժամանակ աշակերտներից մեկը նկատեց, որ Թաթուլի կերպարը կարելի է համամետել մերօրյա զինվորի կերպարի հետ, առանձնացնելով այն հատվածը, որտեղ Թաթուլը 40 օր, 40 գիշեր կռվել է շահի դեմ՝ միշտ կանգուն պահելով Թմկա բերդը:
Ինչպես նկատում ենք այս դասարանում ևս հայրենասիրությունը և հայ զինվորի կերպարը ամենաարդիականն է:

[16] Գասպարյան Դ., Գրականություն 8, Երևան 2012, էջ 144:
[17] Տե՛ս նույն տեղում, էջ 147:

Տղաների խումբը Թաթուլի կերպարը վերլուծելիս առանձնացրեց նրա դրական և բացասական կողմերը՝ արժևորելով նրա քաջությունն ու հայրենիքին նվիրվածությունը, սերն ու հավատարմությունը:

Աղջիկների խումբն էլ իր հերթին ներկայացրեց Թմկա տիրուհու կերպարը՝ բնութագրելով նրան, որպես դավաճան, փառասեր կին:

Դասի ընթացքում ուսուցիչը «Հարցերի շղթայի մեթոդի» օգնությամբ փորձում էր հասկանալ թե որքանով են աշակերտները խորը ընկալում կերպարները և արծածվող հարցերի կարևորությունն ու արդիականությունը: Դասի ամբողջ ընթացքում շատ կարևոր է այն պատասխանին սպասելու մեթոդի պահպանումը, որի ժամանակ ուսուցիչը չի պատասխանում իր տված հարցին՝ սպասելով, որ պատասխանը կհնչի դասարանում:

Ուսուցիչը հարցերի օգնությամբ պարզեց, թե որքանով է ընդունելի կամ ոչ ընդունելի այս կերպարները աշակերտների համար և ինչպես կվարվեին իրենք, եթե լինեին Թաթուլի կամ Թմկա տիրուհու դերում:

Դասն ամփոփելիս ուսուցիչը նկատեց, որ անցնում են աշխարհից բոլորը, անմեռ է մնում միայն զրույցը լավ ու վատ մարդկանց մասին: Անցնում է աշխարհից ագահ տիրուին՝ սևաչյա մատնիչը, անցնում են «զալում» արքան ու քաջ Թաթուլը, մնում է նրանց գործը: Ապրում են մարդկանց լավ ու վատ արարքները: Թաթուլ իշխանը հիշվում է հերոսական գործով, իսկ դավաճան տիրուհին՝ մատնությամբ: Սա կարծես պատգամ էր աշակերտներին՝ շարունակել ապրել ավելի ազնիվ և արդար այս կյանքում: Սովորեցին նոր բառեր, արտայայտչական նոր ձևեր և միջոցներ: Իսկ խմբային աշխատելո ընթացքում դասարանը ավելի համախմբվեց, սովորեց արգել դիմացի աշակերտի կարծիքը:

5-10 րոպեում ուսուցիչը գնահատեց աշակերտներին՝ տալով մեկական հարց:

5 րոպեում ուսուցիչը հանձնարարում է հաջորդ դասը, տնային աշխատանք՝ շարադրություն նախընտրած կերպարի մասին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արժեքները համոզմունքներ են, որոնք անհատն ունի այն ցանկալի նպատակների վերաբերյալ, որոնց պետք է ձգտել կյանքում: Դրանք գործողության շարժառիթ են, ծառայում են որպես ուղենիշային սկզբունքներ՝ որոշելիս, թե ինչպես գործել: Արժեքներն ավելին են, քան կոնկրետ գործողությունները և համատեքստերը, և դրանք ունեն նորմատիվ հրանգավորման բնույթ՝ ներկայացնելով, թե ինչպես պետք է անել կամ մտածել բազմաթիվ տարբեր իրավիճակներում: Արժեքները չափանիշներ կամ չափորոշիչներ են առաջարկում՝ թե՛ սեփական անձի, և թե՛ այլոց գործողությունները գնահատելու, կարծիքները, մոտեցումներն ու բարքը հիմնավորելու, այլընտրանքներից որևէ մեկն ընտրելու, վարքագիծը պլանավորելու և այլոց վրա ազդել փորձելու համար:

Կարելի է եզրակացնել, որ արժեքները համոզմունքներ են, որ կապված են ցանկալի նպատակների հետ, որոնք մոտիվացնում են գործողությունները: Արժեքները ծառայում են որպես չափանիշներ և սկզբունքներ, որոնք մարդկանց ուղղորդում են կոնկրետ գործողությունների: Մարդն է որոշում, թե ինչն է լավ, ինչը՝ վատ, արդարացնում կամ մեղավոր է ճանաչում, գործում կամ խուսափում է՝ հիմնվելով իր համար բացարձակ կամ հարաբերական արժեքների հաջորդականության վրա:

Այսպիսով, «Գրականություն» առարկայի ուսուցման նպատակը միջնակարգ ուսումնական հաստատության դասարաններում որպես չափորոշչային պահանջ ներառում է այնպիսի արժեքների գիտակցված իմացություն և կիրառում, որոնցից են սովորողի կողմից հայրենասեր լինելու, հայրենիքի պաշտպանության գործին ծառայելու, իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու, արդարամիտ, լավատես և պատասխանատու լինելու կամքն ու պատրաստակամությունը:

Այս հետազոտական աշխատանքի արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների՝

1. Ուսուցիչը պետք է կարողանա վարել ինտեգրված դաս, որպեսզի կարողանա ընդհանուր պատկերացում տալ դեպքերի տեղի և ժամանակաշրջանի մասին:
2. Ուսուցիչը պետք է դասն անցկացնի դպրոցական ծրագրին և չափորոշիչներին համաատասխան:
3. Լավ արդյունքի հասնելու համար ուսուցիչը պետք է նախօրոք հանձնարարի բնագրի ընթերցանությունը, ստուգի աշակերտների տեղեկացվածությունը:
4. Ուսուցիչը պետք է ուշադրություն դարձնի իր աշակերտների բանավոր խոսքին, արտահայտած մտքերին, անծանոթ բառերի գործածությանը, հաճախ թույլ տրվող սխալներին:
5. Ուսուցիչը պետք է կարողանա դասապրոցեսին ներգրավել բոլոր աշակերտներին:

6. Հանձնարարիր շարադրություն՝ զարգացնելով աշակերտների գրավոր վերլուծական խոսքը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բաբանսկի Յ. Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում:
2. Գասպարյան Դ., Գրականություն 8, Երևան 2012:
3. Գևորգյան Ա., Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Երևան, 2002:
4. Թորոսյան Ա., Բարձր դասարանցիների արժեքային որակների զարգացումը որպես «Հայոց պատմություն» առարկայի ուսուցման նպատակ, «Մխիթար Գոշ», Գիտամեթոդական հոդվածներ:
5. Հայ գրականություն, 9-րդ դասարան, 1985:
6. Ղուկասյան Ա., Հարցադրման մեթոդները և ուսուցման արդյունավետության բարձրացումը:
7. Պետրոսյան Մ., Հարցերի կամ հարցադրումների մեթոդ:
8. Սահակյան Թ. Հարցն ու հարցադրումը որպես դասի կարևոր և ուղղարդիչ բաղադրիչներ, «Մխիթար Գոշ», ուսումնամեթոդական հոդվածներ:
9. Փախչանյան Ա., Դպրոցը, արժեքները և տարատեսակ «ազատությունները»
10. Փարեմուզյան Ի., Սովորողների արժեհամկարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում:
11. Համացանց:

Դասապլան 1

Առարկա՝	Գրականություն	Ամսաթիվ		Կիսամյակ	2	Դասարան	8
Թեմա՝	Հովհաննես Թումանյան, «Թմկաբերդի առումը», «Նախերգանք», 1-ին դաս						
Օգտագործ-վող նյութեր՝	8-րդ դասարանի Գրականության դասագիրք, բառարան, մարկերներ, կպչուն թղթեր:						
Դասի նպատակը՝	• ունենա գրական սեռերի (արձակ, չափածո, դրամատուրգիա) և ժանրերի (վեպ, վիպակ, պատմվածք, նովել, բանաստեղծություն, պոեմ, բալլադ) մասին նվազագույն իմացություն • կարդա, ընկալի գեղարվեստական երկի բովանդակությունը • տեքստը բաժանի առանձին հատվածների, դրանք վերնագրի • գրառի անծանոթ բառերը և բառարանի օգնությամբ գտնի դրանց բացատրությունը, մի քանիսը կիրառի խոսքի մեջ						
Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդ-յունքները	• արտահայտիչ ընթերցել բնագրերը, ընտրելիատվածներ և ներկայացնել բովանդակությունը • կատարել բառային աշխատանք՝ անծանոթ բառերի դուրսբերում, հոմանշային շարքերի կազմում • կատարել ստեղծագործական աշխատանք՝սովորած բառերի, արտահայտությունների կիրառություն սեփական խոսքում • տարբերակել արձակ և չափածո ստեղծագործությունները						
Գործողու-թյուններ (ժամ,տևո-ղություն)	Ուսումնական գործունեությունն *Աշակերտներ*	Ուսումնական գործունեությունն *Ուսուցիչ*	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ(ներ)			
Մուտք, ներկա-բացակա-/3ր/ Սկիզբ-/5-7ր/	Աշակերտները լսում են, մտածում տրված հարցերի մասին: Պատասխա-նում հարցերին:	Մտագրոհ է անում բարդություն-ների վերաբերյալ: Հիշեցնում նախորդ դասերին					

		անցածը, լսում է կարծիքները:		
Ընթացք /25-30ր/	Կարողանալ պատասխանել դասագրքում զետեղված հարցերին:	Նախորդ դասի հարցում, անհասկանալի հարցերի մեկնաբանում: Հարցադրումներ, գնահատում:	Ստեղծագործության արտահայտած գաղափարի վերաբերյալ:	Մտագրոհ, երեք բանալի մեկ կողպեք, քարտեագրում, հարցադրումների մեթոդ:
Ավարտ /5ր/	Գուշակում են անցկացված դասի նպատակները, համեմատում են դասի ուսուցչի ներկայացրած նպատակների հետ: Նշում են թե ինչ սովորեցին, ինչ թերըմբռնում ունեն:	Ներկայացնում է դասի նպատակների և վերջնարդյունքների իր տարբերակը:		
Տնային աշխատանք 3ր.	*Տնային առաջադրանքի հանձնարարում:*			

Դասապլան 2

Առարկա՝	Գրականություն	Ամսաթիվ		Կիսամյակ	2	Դասարան	8
Թեմա՝	Հովհաննես Թումանյան, «Թմկաբերդի առումը», պոեմի գաղափարը, անցողիկ կյանքի և անմահ գործի գաղափարը պոեմում, 2-րդ դաս						
Օգտագործ-վող նյութեր՝	8-րդ դասարանի Գրականության դասագիրք, բառարան, մարկերներ, կպչուն թղթեր:						
Դասի նպատակը՝	• անգիր սովորել «Նախերգանք»-ը • կարդալ գեղարվեստական տեքստը, վերարտադրել դրա բովանդակությունը մեկ–երկու պարզ նախադասությամբ • դուրս գրել կերպարները և կազմել համեմատական բնութագիրը						
Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդ-յունքները	• բնութագրել ստեղծագործության գլխավոր հերոսին/մի քանի համառոտ նախադասությամբ/ • խմբի անդամների հետ մասնակցել հարցերի քննարկմանը						
Գործողու-թյուններ (ժամ,տևո-ղություն)	Ուսումնական գործունեություն *Աշակերտներ*	Ուսումնական գործունեություն *Ուսուցիչ*	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ(ներ)			
Մուտք, ներկա-բացակա-/3ր/ Սկիզբ-/5-7ր/	Աշակերտները լսում են, մտածում տրված հարցերի մասին: Պատասխանում հարցերին:	Մտագրոհ է անում բարդություն-ների վերաբերյալ: Հիշեցնում նախորդ դասերին անցածը, լսում է					

		կարծիքները:		
Ընթացք /25-30ր/	Նկարագրել ստեղծագոր-ծության հերոսին, հետաքրքիր իրավիճակ-ները, կարողանալ պատասխանել դասագրքում զետեղված հարցերին:	Նախորդ դասի հարցում, անհասկա-նալի հարցերի մեկնաբա-նում: Հարցադրում-ներ, գնահատում:	Հերոսների կերպարների մասին, իրավիճակի բնութագրման մասին, համեմատում այլ ստեղծագործությու ններ կերպարների հետ, դավաճան կնոջ կերպարի գաղափարի մասին, պատկերավորման միջոցների մասին, պոեմի բնույթի մասին, վերջնարդյունքի-պատգամի մասին:	Մտագրոհ, երեք բանալի մեկ կողպեք, քարտեզագրում, հարցադրումների մեթոդ, Վեննի դիագրամի մեթոդ, 10 րոպեանոց շարադրութ-յան մեթոդ:
Ավարտ /5ր/	Գուշակում են անցկացված դասի նպատակները, համեմատում են դասի ուսուցչի ներկայացրած նպատակների հետ: Նշում են թե ինչ սովորեցին, ինչ թերըմբռնում ունեն:	Ներկայաց-նում է դասի նպատակ-ների և վերջնարդ-յունքների իր տարբերակը:		
Տնային աշխատանք 3ր.	*Տնային առաջադրանքի հանձնարարում:*			

Դասերի անդրադարձ

1.Ի՞նչը լավ ստացվեց:

- Դասապրոցեսը

2.Ի՞նչն անակնկալի բերեց ինձ:

- երեխաների հետաքրքրությունները,
- բոլոր աշակերտների համագործակցությունը,
- պասիվ աշակերտների ակտիվությունը

3.Ի՞նչը կփոխեի:

- Ընթերցանությունը կկազմակերպեի դերերով, կբեմականացնեի ստեղծագործությունը:

4.Ի՞նչ ստացան աշակերտները այս դասից:

- Կարողացան լավ ստեղծագործել, զարգացնել խոսքը, վերլուծել կերպարները:

5.Հասա՞ արդյոք վերջնարդյունքներին: Ինչպես՞ դա իմացա:

Աշակերտները՝

- կարողացան ասմունքնել «Նախերգանք»:
- կարողացան վերլուծել ստեղծագործությունը՝ գտնելով դրական և բացասական կերպարներին,
- գտան պատկերավորման-արտահայտչական միջոցները,
- տվեցին անծանոթ բառերի բացատրությունները:

6.Ի՞նչն էր այսօր իմ ուշադրության կենտրոնում:

- Իմ ուշադրության կենտրոնում դասարանի ակտիվությունն ու համեմատաբար թույլ աշակերտներն էին: